Միջազգային ու հանրապետական պարբերականներում /ամսագրերում հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ,գիտամանկավարժական, հեղինակային ու այլ աշխատություններ ունեցող ուսուցիչներ (հաշվարկ. հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային ու այլ աշխատություններ ունեցող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	18	23
Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ (հաշվարկ. դասավանդման աշակերտակենտրոն,մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և կիրառող հաստատության ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	73	100

Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում ինտերնետ կիրառող ուսուցիչներ (հաշվարկ. ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում ինտերնետ կիրառող ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	73	100
Սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչներ (հաշվարկ. սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին՝ տոկոսային արտահայտությամբ)	12	16.5
Ուսուցիչների բացակայությունների քանակը	413 ժամ	-
Ուստարվա ընթացքում ուսուցիչների փոխադարձ դասալսումների թիվը	167 ժամ	-
Ուստարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը	6 ժամ	-

Դպրոցում գործում է բավականաչափ պրոֆեսիոնալ և փորձառու ուսուցչական կազմ: Ուսուցիչների մեծ մասն ունի 20-40 տարվա մանկավարժական փորձ: Դպրոցի ուսուցիչները առարկաները դասավանդում են հայերենով, բացառությամբ՝օտար լեզուների:

Տալով աշակերտներին պետական չափորոշիչով սահմանված գիտելիքները, նրանք մշտապես իրականացնում են արտածրագրային աշխատանք՝ հնարավորություն ընձեռելով աշակերտներին ընդլայնել իրենց գիտելիքները դասավանդվող առարկաների շուրջ: Բացի այդ, Դպրոցի ուսուցչական կազմը մեծ ուշադրություն է դարձնում աշակերտների բարոյահոգեբանական դաստիարակությանը և նրանց մոտ բարձր որակի անձնային հատկանիշների ձևավորմանը:

Հաշվի առնելով Դպրոցի նյութատեխնիկական հագեցվածությունը, մասնավորապես դասարաններից շատերում էլեկտրոնային գրատախտակների և համակարգիչների առկայությունը՝ ուսուցիչները վերջին տարիների ընթացքում բազմիցս վերապատրաստվեցին, ինչպես Դպրոցում, այնպես էլ այլ հաստատություններում և այսօր ուսուցիչների 99 տոկոսը ունի բավարար համակարգչային գիտելիքներ և հնարավորություն այդ գիտելիքները կիրառել դասապրոցեսում:

Առաջիկա տարիներին նախատեսվում է էլ ավելի հարստացնել Դպրոցի նյութատեխնիկական բազան և բոլոր դասասենյակներում ապահովել էլեկտրոնային գրատախտակների առկայություն, իսկ ուսուցիչների համակարգչային

գիտելիքների խորացումը կրում է շարունակական բնույթ:
Ուսուցչական կազմի պրոֆեսիոնալիզմի և կոմպետենտության մասին բազմիցս արձագանքում են ծնողները, իսկ աշակերտներն ավանդաբար իրենց հերթին տածում են խորը հարգանք և ջերմ վերաբերմունք իրենց ուսուցիչների նկատմամբ:
Ծնողական ժողովներին կատարված հարցումներն ևս բացահայտում և արձանագրում են Դպրոցի ուսուցիչների աշխատանքի բարձր գնահատականը:

3.7 Դպրոցի ուսումնական միջավայրին և ծառայություններին վերաբերող ցուցանիշներ և չափանիշներ

Հաստատությունում ստեղծված է որակյալ կրթական միջավայր, մասնավորապես.
1.Դպրոցն ունի գործող և բավարար ֆիզիկական պայմաններով գրադարան, որը հագեցած է անհրաժեշտ ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով և, որից կանոնավոր կերպով օգտվում են սովորողները, ուսուցիչները և վարչական կազմը:
2.Դպրոցն ունի ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, այդ թվում՝ քիմիայի, ֆիզիկայի, ռազմագիտության, 3 համակարգչային և այլն, ինչպես սպորտդահլիճ, միջոցառումների դահլիճ և այլ հատուկ ուսումնական դասասենյակներ/սենյակներ, ներառյալ արտադպրոցական կրթության և լրացուցիչ կրթական ծրագրերի համար, որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով և ուսումնանյութական և ուսումնադիդակտիկ նյութերով:

3.8 Տվյալներ Դպրոցի գրադարանի և դրա գործունեության մասին

Ցուցանիշ	Տվյալներ
Գրադարանի տարածքը քմ-ով	56.48
Ընթերցասրահի առկայությունը	առկա
Գրադարանում/ընթերցասրահում միաժամանակ նստելու հնարավորություն ունեցող անձանց թիվը	25
Գրադարանի գրապահոցի տարածքը քմ-ով	46.28
Գրադարանում համակարգիչների թիվը	1
Գրադարանում ինտերնետին միացված համակարգչների թիվը	1

Գրադարանային ֆոնդում առկա գրքերի /բացառել ՀՀ ԿԳ նախարարության կողմից երաշխավորված հիմնական դասագրքերը/ ընդհանուր թիվը, այդ թվում՝	11625
-գեղարվեստական գրքերի թիվը	8883
-տեղեկատվական գրքերի թիվը /բառարաններ, հանրագիտարաններ, ատլասներ և այլն/	117
-ուսումնամեթոդական գրքերի թիվը	1699
-ամսագրերի թիվը	666
-այլ	200
Վերջին անգամ գրադարանային ֆոնդը նոր գրականությամբ համալրվելու ամսաթիվը	20.04.2022
Ամենից հաճախ գրադարանից վերցվող գրքերը	Գեղարվեստական
Գրադարանից միջինում ամսեկան օգտվողների թիվը	68
Գրադարանում բաժանորդագրված ուսուցիչների և դպրոցի մյուս աշխատակիցների թիվը	98
Գրադարանում բաժանորդագրված սովորողների թիվը	725
<u>Պատասխանել այո կամ ոչ</u>	
Վերանորոգվա՞ծ է արդյոք գրադարանը	Այո
Անց կացվու՞մ են արդյոք գրադարանում դասեր և Պարապմունքներ	Այո
Գրադարանավարներն ունե՞ն համապատասխան բարձրագույն կրթություն	Այո
Վերջին տարվա ընթացքում գրադարանավարներն անցե՞լ են վերապատրաստում գրադարանային աշխատանքի ուղղությամբ	Ոչ

Գրադարանը հանդիսանու՞մ է հանրապետության, այլ երկրների կամ կազմակերպությունների գրադարանների բաժանորդ և օգտվում է արդյոք նրանց ռեսուսներից	Ոչ
Գրադարանն ունի՞ էլեկտրոնային ռեսուրսներ	Այո
Սովորողները իրենց տնային հանձնարարությունները կատարելիս օգտվո՞ւմ են գրադարանային ռեսուսներից	Այո
Գրադարանավարը սովորողներին օգնու՞մ է գտնել անհրաժեշտ նյութեր դասարանական և տնային հանձնարարությունների կատարման համար և ընթերցանության գրքերի ընտրության հարցում	Այո
Սովորողները կարո՞ղ են ինքնուրույն ու ազատ մոտենալ գրադրանի գրադարակներին/պահարաններին, ընտրել իրենց անհրաժեշտ գրականությունը և վերցնել այն ընթերցասրահում աշխատելու ժամանակ	Այո
Գրադարանն ունի՞ այն գրքերը, որոնք ամենից հաճախ են ցանկանում վերցել սովորողները	Այո
Գրադրանն ունի՞ գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագիր	Այո
Գրադարանավարը կարողանո՞ւմ է օգտվել գրադարանավարության հատուկ համակարգչային ծրագրից	Այո

3.9 Տվյալներ Դպրոցի ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ

Լաբորատորիա ներ, կաբինետներ և դահլիճներ	Տարածքը (քմ)	Վերանորոգման կարիք ը	Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, պարագաները (թվարկել հիմնականը, նշել քանակը)	Ուսումնա-նյութական, ուսումնա-դիդակտիկ նյութերը	Լրացուցիչ գույքի, սարքավորումների, պարագաների, նյութերի կարիքը
Քիմիայի լաբորատորիա	45,03	չկա	աթոռ-30, սեղանաշարք-4, ծորակ-15, քարշիչ պահարան-1, պահարան մեծ-1, պահարան փոքր-1, շտատիվ մետաղական-12, շտատիվ պլաստմասե-10, ուսումնական կշեռք մեծ -1, ուսումնական կշեռք փոքր-7		HCl, բժշկական սպիրտ, գազատար կլորահատակ կոլբ՝ տարբեր չափսերի, բաժակներ50մլ, 250մլ, ռետինե խողովակներ, կաթոցիկներ, քիմիական տարրերի պարբերական համակարգ մեծ
Ֆիզիկայի Լաբորատորիա	52,14	չկա			
Ռազմագիտությ ան կաբինետ	45,05	կոսմետիկ	աթոռ-32, սեղան-16, կախովի պահարան-2	Հրաձգարան, պաստառներ, ԱԿ-74 ինքնաձիգ-3 հատ, նռնականետ-3, նռնակներ, ուսումնական փամփուշտներ, պնևմատիկ հրա ցաններ-4 ,ականներ՝	Կաբինետը հագեցած է անհրաժեշտ գույքով և ուսումնադիդակտի կ պարագաներով:

				հակահետևանքայ ին և հակատանկային	
Համակարգչային լաբորատորիաներ	1.-52,2 2.-46,4 3.-56,42	չկա		Էլեկտրոնային գրատախտակ	
ռոբոտաշինության դասասենյակ	30,6	չկա	սեղան, աթոռներ	ինքնաշեն սարքեր, համակարգիչ-1	էլեկտրոնային գրատախտակ, գործիքային սարքավորումներ
Միջոցառումնե րի դահլիճ	220,03	կոսմետիկ	250 աթոռ բարձրախոս-3	Պրոյեկտոր-1 համակարգ1իչ-1 ուժեղացուցիչ-2	
Մարզադահլիճ	211,5	կոսմետիկ	շվեդական պատ զուգափայտ այծիկներ մարմնամարզական ձող պարաններ, գնդակներ՝վոլեյբոլի, բասկետբոլի, ֆուտբոլի թենիսի սեղան		մարզագույքի համալրում, թարմացում
մարզահրապարակ	243,88	չկա	թենիս		

Դպրոցի ուսումնական լաբորատորիաների, կաբինետների, դահլիճների և ուսումնաօժանդակ տարածքների վիճակն, նյութական հագեցվածությունը գտնվում է բավարար վիճակում: Ներկայումս Դպրոցի հիմնախնդիրն է պահպանելու առկա նյութատեխնիկական հագեցվածությունը և անհրաժեշտության դեպքում համալրելու նորագույն տեխնիկական միջոցներով: Առարկաների ուսումնասիրության ժամանակ ակտիվորեն կիրառվում են դպրոցի լաբորատորիաների և կաբինետների նյութատեխնիկական միջոցները, ինչպես նաև ուսումնադիդակտիկ պարագաները:

3.10 Դպրոցի ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշները ընթացիկ ուստարվա համար

ցուցանիշ	2021-2022 ուստարի
Սովորող/ուսուցիչ հարաբերություն (հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին)	725/73
Սովորող/ սպասարկող- վարչական անձնակազմ հարաբերությունը (հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը վարչական և սպասարկող անձնակազմի ընդհանուր թվին)	725/10
Դասարանների միջին խտությունը (հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը կոմպլեկտավորված դասարանների ընդհանուր թվին)	28
Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը (հաշվարկ. հաստատության տարեկան նախահաշվով հաստատված ամբողջ գումարի հարաբերությունը հաստատության սովորողների ընդհանուր թվին)	**54.500 դրամ**
Ուսուցչի միջին աշխատավարձը (հաշվարկ. հաստատության տարեկան նախահաշվով ուսուցիչների աշխատավարձի գծով նախատեսված ամբողջ գումարի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին)	**189.500 դրամ**
Վարչական աշխատողների միջին աշխատավարձը (հաշվարկ. հաստատության տարեկան նախահաշվով վարչական աշխատողների աշխատավարձի գծով նախատեսված ամբողջ գումարի հարաբերությունը վարչական աշխատողների ընդհանուր թվին)	**273.000 դրամ**
Սպասարկող կազմի միջին աշխատավարձը (հաշվարկ. հաստատության տարեկան նախահաշվով սպասարկող կազմի աշխատավարձի գծով նախատեսված ամբողջ գումարի հարաբերությունը սպասարկող կազմի աշխատողների ընդհանուր թվին)	**119.600 դրամ**
Փոխանցումներ արհմիությանը	**1.800.000դրամ**

3.11 Տվյալներ հաստատության արտաբյուջետային միջոցների վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի
Հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը (հաշվարկ. հաստատության արտաբյուջետային միջոցների տարեկան չափի և հաստատության տարեկան նախահաշվի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտ-մբ)	**13.005.400 դրամ**
Ծնողների կողմից դրամային ներդրումների տարեկան չափը (հաշվարկ. տարվա կտրվածքով ծնողների, կողմից կատարած ներդրումների ընդհանուր գումարի և հաստատության տարեկան նախահաշվի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)	**0 դրամ**
Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը (հաշվարկ. տարվա կտրվածքով հովանավորողների կողմից կատարված ներդրումների և դրամաշնորհային միջոցների ընդհանուր գումարի և հաստատության տարեկան նախահաշվի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)	**0 դրամ**
Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը հաստատության տարեկան բյուջեում (հաշվարկ. աշխատավարձերի վճարման հոդվածով՝ ներառյալ հարկերը, հաստատության տարեկան ծախսերի չափի և հաստատության տարեկան նախահաշվի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)	**287.026.000 դրամ**
Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը հաստատության տարեկան բյուջեում (հաշվարկ. կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափի և հաստատության տարեկան նախահաշվի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)	**14.778.600 դրամ**
Նոր գույքի, սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը հաստատության տարեկան բյուջեում (հաշվարկ. նոր գույքի և սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափի և հաստատության տարեկան նախահաշվի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտ-մբ)	**5.300.900 դրամ**

Մաս. 4. Դպրոցում ներառական կրթության և հավասարության ապահովում

Դպրոցը կարևորում է ներառական կրթությունը, սակայն դեռևս առկա են բացեր Դպրոցում ներառական կրթություն լիարժեք իրականացնելու համար, մասնավորապես. կապված շենքային և նյութատեխնիկական համապատասխան ապահովվածության պայմանների հետ:

Առաջիկա տարիներ նախատեսվում է իրականացնել միջոցառումներ՝ ներառական կրթություն ապահովելու հնարավորությունները զարգացնելու ուղղությամբ, այն է. ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրել զարգացման ծրագրում, իրականացնել ուսուցիչների և վարչական անձնակազմի վերապատրաստում, շենքային և նյութատեխնիկական պայմանները հարմարեցնել ներառական ուսուցման կարիք ունեցող երեխաների կարիքներին:

Դպրոցը ներկայումս իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր: Դպրոցում ապահովված է սեռերի, և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը

4.1 Դպրոցում ներառական կրթության իրականացմանը վերաբերվող չափանիշներ

չափանիշ	այո	ոչ	Մեկնաբանություն
Ներառական կրթության զարգացումը որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում	V		Զարգացման ծրագրում ներառական կրթության վերաբերյալ առկա է առանձին ենթաբաժին, որով նախատեսվում է շենքային պայմանների հարմարեցում և մանկավարժական անձնակազմի վերապատրաստում:
Հաստատության զարգացման ծրագրում պլանավորված են ներառական կրթության ապահովմանն ուղղված համապատասխան	V		

միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ			
Հաստատության տնօրենն ունի ներառական կրթության գործընթացի համակարգման լիազորություններով տեղակալ/կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին	V		Տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, 2 հոգեբան
Հաստատության վեբ կայքում գործում է ներառական կրթության բաժին՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ		V	
Հաստատությունն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր:	V		-Դպրոցում գործում է բանավեճի ակումբ, որտեղ սովորողները պարբերաբար անդրադառնում են իրավական թեմաների: -Երեխաների իրավունքների իրացմամբ մեծ ջանքեր է գործադրում Աշակերտական խորհուրդը:
Վերջին 5 տարում տնօրինությունը մասնակցել է ներառական հաստատությունների կառավարման թեմայով վերապատրաստման	V		
Հաստատությունն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված ուսուցիչներ:	V		Վերջին տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը 19 է
Հաստատությունն ունի ներառական	V		1-Տաթևիկ Սարդարյան

կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստող ուսուցիչներ:			
Հաստատությունում (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) ապահովված է տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելիություն		V	
Հաստատությունն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ	V		2 հոգեբան
Հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար:		V	
Հաստատությունում առկա են բավարար քանակի և որակի սարքավորումներ և ուսումնամեթոդական նյութեր լսողության և տեսողության ֆունկցիայի բացակայություն կամ սահմանափակում ունեցող սովորողների համար:		V	
Դասասենյակների դասավորվածությունն այնպիսին է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող	V		Այս ուսումնական տարում դպրոցի սովորողների մեջ չկա ԿԱՊԿՈՒ աշակերտ:

սովորողները մեկուսացված չեն:			
Հաստատությունն ունի ռեսուրս- սենյակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար:		V	
Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական (թեքահարթակ, հենակ և այլն) խոչընդոտները:		V	
Հաստատությունում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական (վերաբերմունք, կարծրատիպ) խոչընդոտները	V		
Անհատական ուսումնական պլանները (ԱՈՒՊ) մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողների կարիքները, ընդունակությունները, հնարավորությունները, ձեռքբերումները և առաջընթացը:		V	Անհրաժեշտություն չի լինում:
Ուսուցիչները ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ:	V		Բոլոր ուսուցիչները ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ
Ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց	V		

վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր:			
Ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ, անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից:	V		
Ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ, երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում, և նույնիսկ սեփական վարքագծում:	V		
Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերը:	V		Սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար իրականացվում են հատուկ ծրագրեր՝ վերջիններիս աջակցելու ուղղությամբ:

4.2 Տվյալներ Դպրոցում հավասարության ապահովման խնդիրների վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի
Սեռերի հավասարության գործակիցը՝ հաստատությունում սովորող տղաների թվի հարաբերությունը աղջիկների թվին	3,2 549/168
Աշակերտական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը՝ խորհրդի անդամ աղջիկների թվի հարաբերությունը տղաների թվին	0,8 12/14

Գերազանց առաջադիմությամբ աղջիկների թվի հարաբերությունը գերազանց առաջադիմությամբ տղաների թվին	**0,8** **14/16**
Տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող տղաների թվի հարաբերությունը տարեկան անբավարար գնահատական(ներ) ունեցող աղջիկների թվին	**19/1**
Տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունը աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով)	-
«Մաթեմատիկա», «ֆիզիկա» առարկաներից միջին առաջադիմությունը /տարեկան գնահատականները	**7**
Հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը և տոկոսը (Հաշվարկ. հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)	**0**
Աշակերտական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը	**0**
Անվճար դասագրքեր ստացող սովորողների թիվը և տոկոսը (Հաշվարկ. անվճար դասագրքեր ստացող սովորողների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)	**73-1**
Անվճար սնունդ ստացող սովորողների թիվը և տոկոսը (Հաշվարկ. Անվճար սնունդ ստացող սովորողների թվի հարաբերությունը սովորողների ընդհանուր թվին)	**725-100**
Հաստատության կողմից իրականացված ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումների թիվը՝ ըստ դասարանների (զրույցներ, ֆիլմերի դիտում, քննարկումներ. կլոր-սեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներ և այլն):	**0**
Սոցիալապես անապահով ընտանիքներից սովորողների համար հաստատության իրականացրած սոցիալական աջակցության ծրագրերի թիվը	**0**

Ինչ վերաբերում է դպրոցում սեռային հավասարության ապահովմանը, ապա տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Դպրոցում առկա է նպաստող միջավայր տղաների և աղջիկների հավասարապես և լիարժեք մասնակցելու դպրոցի հասարակական կյանքին:

Մաս. 5. Համայնքային մասնակցություն

Դպրոցում մթնոլորտը նպաստում է սովորողների և տնօրինության համագործակցությանը: Տնօրինությունը խրախուսում է ակտիվ սովորողների մասնակցությունը հաստատության գործունեությանը, խթանում է սովորողների նախաձեռնությունները, օժանդակում է դրանց իրագործմանը.

Հաստատությունում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները: Հաստատության աշակերտական խորհրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, աշակերտների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք:

Հաստատության ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է տնօրինության և աշակերտական խորհրդի հետ, նպաստում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին:

Հաստատությունը և համայնքը համագործակցում են և հաստատությունը վարում է ակտիվ հասարակական կյանք:

5.1. Տվյալներ Դպրոցի գործունեությանը սովորողների մասնակցության վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի
Սովորողների մասնակցությամբ իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ ղեկավարության կողմից որոշումների կայացման դեպքերի թիվը	4
Սովորողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունների թիվը.	11
Սովորողների կողմից կազմակերպած միջոցառումների թիվը	12

Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովների, սեմինարների, կլոր-սեղանների, քննարկումների թիվը	6

5.2 Սովորողների մասնակցությամբ իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի շուրջ հաստատության ղեկավարության կողմից կայացրած որոշումները և դրանց կայացմանը մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը

Նկարագրել քննարկված խնդրահարույց հարցերը և կայացված որոշումները	**ժամանակ**	**Մասնակ ից սովորող ների թիվը**	**Մեկնաբանությո ւն**
Դպրոցում Ինֆորմատիկա առարկայի դասավանդման և ծրագրային բարելավում	Ապրիլ 2022	5	Խնդրի բարձրաձայնումը եղել է՝ հաշվի առնելով ինֆորմատիկա առարկայով առավել հետաքրքրված աշակերտների կարծիքը:
Բարեգործական նախաձեռնություն 1	Հունիս-հուլիս , 2022	80	ՀՀ տարբեր դպրոցների թվով 80 աշակերտների համար կազմակերպվել է MATHCAMP22 ճամբար
Բարեգործական նախաձեռնություն 2	Օգոստոս, 2022	150	MutEx դպրոցի հետ համատեղ կազմակերպվել է GenerationIT ճամբարը:
Դասավանդող ուսուցչի հետ կոնֆլիկտ	Մայիս, 2022	28	Դպրոցի դասարաններից մեկում սովորողների և դասավանդող ուսուցիչներից մեկի միջև կոնֆլիկտի կարգավորում:

5.3 Իրենց հուզող հարցերի վերաբերյալ սովորողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր-սեղանները, քննարկումները և մասնակցություն ունեցած սովորողների տոկոսը 2021-2022 ուստարում

Դպրոցում աշակերտները ակտիվորեն մասնակցում են իրենց վերաբերվող հարցերին, ներկայացնում են առաջարկություններ՝ իրենց հուզող հարցերի վերաբերյալ, կազմակերպում կլոր սեղաններ, քննարկումներ: Աշակերտական խորհուրդը ունի հարմարավետ առանձնացված սենյակ, որտեղ անց են կացվում աշակերտական խորհրդի նիստերը: Աշակերտները մշտապես հետևում են դպրոցում կարգապահությանը, կազմակերպում են հերթապահություններ դասամիջոցներին: Նրանք հաճախ տնօրենությանը առաջարկություններ են ներկայացնում ուսման որակի բարձրացման, ինչպես նաև նոր դասընթացների, մշակության, ռազմահայրենասիրական միջոցառումների կազմակերպման վերաբերյալ և այլն:

Միջոցառումը	Ամսաթիվ	Մասնակից սովորողների թիվը և տոկոսը	Մեկնաբանությ ուն
<<Ի՞նչ է կամավորությունը>> սեմինար	փետրվար	20 հոգի, կամավորների 20%	Սեմինարի ընթացքում քննարկվել են կամավորության սկզբունքները և շահագործումիցտարբերակելու մեթոդները
<<Ուսումը Կանադայում>> հանդիպում	Հոկտեմբեր և մարտ	40-50 հոգի	Կանադական մի շարք համալսարանների ներկայացուցիչների հետ հանդիպում
<<Շրջակա միջավայրի բարելավումը և աղբի վերամշակում>> խորագրով քննարկում	նոյեմբեր	22 հոգի	Որոշվել է դպրոցի թղթի թափոններն ամբողջությամբ ուղարկել վերամշակման
Ֆիլմդիտումները՝ դպրոցում առաջարկի քննարկում	նոյեմբեր	16 հոգի	Առաջարկված ծրագրով քննարկվել է ֆիլմերի ցանկը և վերլուծությունների օրերը
Հնարավորությունների տարածման արդյունավետության մասին քննարկում	մարտ	34 հոգի	Որոշվեց ստեղծել համապատասխան հարթակ
Արցախի Հանրապետության խնդիրը՝	հունիս	12 հոգի, ծրագրի	Կամավորական միության շրջանակներում

օտարերկրացիների աչքերով		մասնակիցների 100%	կայացած հանդիպումների ընթացում քննարկումներ

5.4 Տվյալներ հաստատության աշակերտական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	նկարագրություն	Ամսաթիվ	Շահառուների քանակ	մեկնաբանություն
Աշակերտական Խորհուրդը կազմակերպել է ImproveIT ծրագիրը	Ծրագրի ընթացքում մշակվել է մասնագիտական ինֆորմատիկայի ծրագիր, որը փորձարկվել էպիլոտային ծրագրի շրջանակներում։ Աշակերտական խորհուրդը հանդես է եկել առաջարկությամբ՝ ամբողջությամբ անցնելու այդ ծրագրին։ Առաջարկությունը ընդունվել է։	2021հոկտեմբեր - 2022 մայիս	Դպրոցի աշակերտների 100%	Մշակված ծրագիրը մշակվելուց ուսումնասիրվել է միջազգային պրակտիկան և ծրագրերի արդյունավետությունը։
<<Ֆիզմաթ>> կամավորական միության ստեղծում	Հիմք ընդունելով ԱԽ-ի մասին օրենքը՝ աշակերտական խորհրդի նախագահ Հովհաննես Մուրադյանի հրամանով ստեղծել է <<Ֆիզմաթ>>կամավորական միությունը։ Միության նախագահ՝ Անուշ Սահակյան։	2021 Սեպտեմբերի 22	150 աշակերտ	Կամավորական միությունը կատարել է բազմաթիվ պրոյեկտներ և ձեռք բերել նոր համագործակցություններ
Աշակերտական Խորհուրդը և <<Ֆիզմաթ>> կամավորական միությունը կազմակերպել են AvailableKnowledge ծրագիրը	Ծրագրի շրջանակներում<<Ֆիզմաթ>> կամավորական միության օլիմպիական կամավորները անվճար սկզբունքներով անցկացրել են մաթեմատիկա, ֆիզիկա առարկաներից խմբակներ, որտեղ օգնել են հետ մնացող աշակերտներին։	2022 Փետրվար-մայիս	47 աշակերտ	Ծրագիրը արդյունավետ անդրադարձավ աշակերտների ուսման վրա
<<Ի՞նչ, որտե՞ղ,	<<Ֆիզմաթ>> կամավորական միությունը	2022	210	Հաղթող թիմը

ե՞րբ>> խաղի կազմակերպում:	կազմակերպեց ինտելեկտուալ խաղը:	մարտ	աշակերտ	պարգևատրվեց աշակերտական միության կողմից:
LearnArmenianTogeth er ծրագիր	Հայաստան տեղափոխված ռուսալեզու մարդկանց համար <<Ֆիզմաթ>. կամավորական միության կողմից կազմակերպվեցին անվճար հայերեն լեզվի դասընթացներ՝ առկա և առցանց տարբերակով:	2022 ապրիլ 2022 Հունիս-հուլիս	35 մասնակից	Արդյունքում մասնակիցները կարողանում էին հասկանալ և կազմել տարրական նախադասություններ
<<Ֆիզմաթ հայտարարություններ>> հարթակի ստեղծում	Ստեղծված հարթակը օգտագործվում է հայտարարությունները ավելի էֆֆեկտիվ տարածելու համար:	2022 փետրվար	330 աշակերտ	Հարթակից օգտվում են մոտավորապես դպրոցի աշակերտների 50 տոկոսը:
MathCamp22 մաթեմատիկական ճամբար	Աշակերտական Խորհուրդը՝ <<Ֆիզմաթ>> կամավորական միության հետ համատեղ կազմակերպեց անվճար ճամբար կրտսեր դասարանի աշակերտների համար:	2022 Հունիս-հուլիս	Մոտ 80 աշակերտ	Ծրագիրը ստացավ դրական արձագանք:
GenerationIT համակարգային ծրագրավորման ճամբար	Աշակերտական Խորհրդի և MutEx School-ի պայմանավորվածության արդյունքում, <<Ֆիզմաթ>> կամավորական միության հետ համատեղ կազմակերպվեց անվճար համակարգային ծրագրավորման ճամբար՝ առկա և հեռակա տարբերակով:	2022 օգոստոս	Մոտ 150 աշակերտ	Կամավորները վերապատրաստվեցի և MutEx School-ի կողմից
Աղբի վերամշակման ծրագիր	Որոշվել է դպրոցի ամբողջ թղթի թափոնը ուղարկել վերամշակման: Դպրոցի տնօրինության գործունեության շնորհիվ՝ դպրոցի թղթի թափոնները վերամշակվում են:	2022 սեպտեմբեր		Ծրագիրը հոգում է շրջակա միջավայրի մասին:
Ուսումը՝ տոփ	<<Ֆիզմաթ>> կամավորական միությանը	2022	32	Ֆիզմաթի

համալսարաններում դասընթաց	կազմակերպել է դասընթաց <<Ուսումը արտասահմանում>> խորագրով:	Օգոստոս	աշակերտ	շրջանավարտ կամավորները կիսվեցին փորձով և գիտելիքներով:

Դպրոցի աշակերտական խորհրդի գործունեության ցուցանիշները բավականին բարձր են: Աշակերտական խորհուրդը կատարում է կանոնադրությամբ սահմանված իր բոլոր լիազորությունները, ակտիվորեն մասնակցում է դպրոցի կառավարմանը և հասարակական կյանքին: Խորհուրդն իր շուրջ համախմբում է Դպրոցի բոլոր աշակերտներին, համակարգում նրանց ուսումնական գործընթացը և մասնակցությունը դպրոցի հասարակական կյանքին: Բացի այդ, Դպրոցի աշակերտները շատ ակտիվորեն են մասնակցում համայնքային և քաղաքի հասարակական կյանքին:

5.5 Տվյալներ Դպրոցի ծնողական խորհրդի գործունեության վերաբերյալ

Ցուցանիշ	2021-2022 ուստարի
Սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացրած առաջարկությունների թիվը և ընդունված առաջարկների տոկոսը ներկայացվածի նկատմամբ	3-100
Ծնողական խորհրդի կողմից տվյալ ուստարում կազմակերպված միջոցառումներ	4
Ժողովների թիվը	8
Ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը՝ դրանց թիվը ուստարվա ընթացքում	2
Սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում ներառված ծնողների թիվը	գրեթե բոլոր սովորողների ծնողները
Ծնողների տոկոսը, որոնք օգտվում են http://www.emis.am , http://www.ktak.am, http://www.armedu.am , http://forum.armedu.am, http://lib.armedu.am և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության կայքից	մոտ 87
Առաջարկություններ-մեկնաբանություն	1.Ուսուցչի տոն-համադպրոցական միջոցառման կազմակերպում, 2. Կանանց միջազգային

	օրվա կապակցությամբ միջոցառմանը աջակցություն, 3. Տարեվերջյան ավարտական հանդիսությունների և էքսկուրսիաների նախապատրաստում:
Ծնողական խորհրդի հանդիպումների ընթացքում քննարկված հարցերը	1.2021-2022 ուստարվա ծնողխորհրդի կազմը հստակեցում, 2. դպրոցի կառավարման խորհրդում ծնողական խորհրդի ներկայացուցիչների ընտրություն

Դպրոցի ծնողական խորհուրդը ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Դպրոցի ինչպես հասարակական կյանքում, այնպես ուսումնական գործընթացի կազմակերպման և Դպրոցի կառավարման այլ հարցերում: Ծնողական խորհուրդը իրականացնում է կանոնադրությամբ սահմանված բոլոր պարտականությունները: Դպրոցի ծնողները նաև օժանդակում են դասղեկներին արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու հարցում: Նրանք առաջարկություններ են ներկայացնում Դպրոցի տնօրենությանը ուսման որակի բարելավման ուղղությամբ, այդ թվում՝ լրացուցիչ կրթական ծրագրեր, խմբակներ և այլ դասընթացներ կազմակերպելու վերաբերյալ:

5.6 Տվյալներ Դպրոցի և համայնքի համագործակցության վերաբերյալ

Ցուցանիշ/չափանիշ			
Հաստատության շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը, մասնակցության ձևը և այդ ուղղությամբ կատարված ներդրումները.			
Նկարագրել համայնքի մասնակցության դեպքերը, մասնակցության ձևը	Ամսաթի վ	Ներդրման չափը	Մեկնաբանությո ւն
Տարածքի բարեկարգում, կանաչապատում, նյութատեխնիկական օժանդակություն և այլն	30.04.22թ	Աղբահանման մեքենայի և աշխատուժի տրամադրում Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի թաղապետարանի կողմից	Դպրոցում կազմակերպվել է տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանք՝ շաբաթօրյակ, որին մասնակցեցին դպրոցի գրեթե բոլոր դասարանները:

Մաս 6. Դպրոցի հիմնախնդիրները և դրանց հաղթահարման ուղիները, ուժեղ ու թույլ կողմերը 2021-2022 ուստարի

Դպրոցն իր գործունեությունը իրականացնում է հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Ուժեղ կողմեր

-Դպրոցի մանկավարժական կազմը համալրված է բարձրակարգ մասնագետներով,
-Սովորողները մոտիվացված են,
-դասարանների համակազմը ձևավորվում է քննությունների շեմը հաղթահարած դիմորդներով,
-Դպրոցի ուսումնատեխնիկական բազան հագեցած է ժամանակակից տեխնիկայով,
-Դպրոցում գործում են Ֆիզիկա, Մաթեմատիկա և ինֆորմատիկա առարկաների ամբիոններ,
-Դպրոցում գործում են ռոբոտաշինության, հրթիռաշինության ակումբներ, մաթեմատիկայի և ֆիզիկայի օլիմպիական խմբակներ,
-Սովորողների դասացուցակային առարկայացանկում ընդգրկված են մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա առարկաներից հատուկ մասնագիտացված դասընթացներ,
-Բոլոր սովորողների համար անվճար տրամադրվում է բարձրորակ սնունդ,
-Դպրոցում այլ բնակավայրերից սովորողների համար գործում է հանրակացարան,
-Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված և հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկից, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից,
-Դպրոցի տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար,
-Դպրոցի գրադարանը հագեցած է անհրաժեշտ գրականաության բավարար քանակով.
- Ջեռուցման լոկալ կաթսայատան շահագործման շնորհիվԴպրոցում հնարավոր է լինում ապահովել անհրաժեշտ ջերմաստիճան ինչպես դասասենյակում, այնպես էլ միջանցքում, մարզադահլիճում, հանդիսությունների դահլիճում, սանհանգույցներում, լաբորատորիաներում:
-Դպրոցում գործում են ֆիզիկայի, քիմիայի լաբորատորիաներ, համակարգչային կաբինետներ:

Թույլ կողմեր

-Շենքային պայմանները,
-Նյութատեխնիկական պայմանների համալրման ոչ բավարար մակարդակը,
-Դասասենյակները համալրված չեն համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակներով,
-Բուժկետը վերանորոգված չէ, անհրաժեշտ դեղամիջոցները բավարար չեն: